
ՀՀ Արմավիրի մարզպետի շնորհավորական ուղերձը գիտելիքի օրվա առթիվ
29.08.2014

Միբելի դպրոցականներ, հարգարժան մանկավարժներ, ծնողներ և կրթության համակարգի նվիրյալներ:

Ի սրտե շնորհավորում եմ Ձեզ Գիտելիքի օրվա կապակցությամբ և ցանկանում, որ այս ուսումնական տարին մշտապես ուղեկցվի հաջողություններով:

Գիտելիքը մարդկության պատմության բոլոր քառուղիներում անփոխարինելի և գերագույն արժեք է հանդիսացել եւ փոխանցվելով սերնդեսերունդ՝ երբեք չի կորցրել իր կարևորությունն ու կենսական նշանակությունը մարդկության պահպանման, առաջընթացի և գիտական նոր նվաճումների ու ձեռքբերումների գործում:

Մեր օրերում, առավել քան երբևէ, արդիական պահանջ է դարձել ժամանակակից գիտելիքներով զինված, համակողմանի և ներդաշնակ զարգացած սերնդի ձևավորումը: Միբելի աշակերտներ, դուք եք մեր վաղվա օրը, ձեր ձեռքերում է հայ ժողովրդի և մեր պետության ապագան:

Այդ է պատճառը, որ դպրոցը գտնվում է պետական մշտական հոգածության տակ, որը շարունակաբար ընդլայնում է իր ծավալները և ուղղությունները:

Ցանկանում եմ, որ Գիտելիքի օրվա տոնական տրամադրությունները մշտապես ուղեկցեն ձեզ՝ նպաստելով կրթության և դատարարական գործընթացների արդյունավետ կազմակերպմանը, լիարժեք ու ամուր ընտանիքների և պետականության կայացմանը: Կրկին շնորհավորելով բոլորիս Գիտելիքի ու դպրության օրվա կապակցությամբ՝ մաղթում եմ, որ նոր ուսումնական տարին լինի առավել արդյունավետ և հազեցած նոր ձեռքբերումներով ու հաջողություններով:

ՀՀ Արմավիրի մարզպետ
Աշոտ Ղահրամանյան